ԱՆԳԼԻԱՅԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ
ՀԱՅԵՐԻ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

«Այս է միակ ցանկութիւնս,
որ մեր հզոր կայսրության ժառանգներն
օրինակ վերցնեն հայերից...»։
Էոնեստ Սիլվանուս էփլարդ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ հատվածը «Eastern Churches» (Արեւելյան Եկեղեցիներ) գրից է, որ լույս է տեսել Լոնդոնում՝ 1850-ին: Հեղինակը՝ էոնեստ Սիլվանուս էփլարդն է (1803–1876 թթ.): Անգլիայի Եկեղեցու[1] այս հոգեւորականի՝ մոտ երկու տասնյակ գրքերից հատկապես հիշատակելի են՝ «Claims of the Church of Rome», «Four Lectures on the Liturgy», «The Sure Hope of Reconciliation», «Proposals for Christian Union», «Twelve Sermons», «The World in Which I Live, and My Place in It», «A History of the British Isles» աշխատությունները, որ բազմաթիվ վերահրատարակություններ են ունեցել. մեզ հայտնի վերջին դեպքը 2016 թվականի է:

«Արեւելյան Եկեղեցիներ» գրքում ուսումնասիրողը հանգամանալի կերպով անդրադարձել է Նեստորական, Հակոբիկյան, Ղպտի եւ Եթովպական Եկեղեցիներին եւ Հայ Եկեղեցուն է նվիրել երկու գլուխ, ուր ամերիկացի միսիոներներ Սմիթի ու Դուայթի հաղորդած տվյալները, ձեռքի տակ եղած այլազան աղբյուրների նյութն ու սեփական տպավորությունները համադրելով՝ դիտարկել է մեր ազգի ու ազգային կառույցի պատմությունը: Գ. գլխի հենց սկզբում հեղինակն ընդգծում է, որ Հայ Եկեղեցուն վերաբերող իր շարադրանքն առանձնանալու է մյուս հատվածներից. «Ի տարբերություն նախորդ գլուխների, որտեղ ուսումնասիրվող նյութի գերակշիռ մասը բաժին էր ընկնում լոկ կրոնական համայնքներին, այս մեկը՝ Եկեղեցու եւ Ազգի մասին է»: Ըստ ամենայնի այստեղ կարելի է եթե ոչ պնդում, ապա գոնե ակնարկ նկատել, որ հեղինակի պատկերացմամբ Արեւելյան Եկեղեցիների պատմությունը գրելիս անկարելի է մյուս հոգեւոր կառույցների նմանությամբ շարադրել զուտ Հայ Եկեղեցու պատմություն... անկարելի է այն անջատել Հայ ժողովրդի պատմությունից:

---

[1] *Անգլիայի Եկեղեցի կամ Անգլիայի ազգային Եկեղեցի (*Church of England, English National Church). *Անգլիկան Եկեղեցու մայր կառույցը. տե՛ս* https://www.britannica.com/topic/Church-of-England.

Էփլյարդի հետազոտության աղբյուրները[2] բազմաթիվ են, եւ, ինչպես նկատեցինք, նա մշտապես ձգտել է համադրել հեղինակների հաղորդած նյութը՝ երբեւէ կուրորեն չհավատալով որեւէ պնդման, այլ փորձելով պարզել իրականությունը կամ բացահայտել կողմնակալ վերաբերմունքի պատճառները՝ ըստ անհրաժեշտության հակադարձելով եւ մերժելով սխալ տեղեկությունները: Այս առումով հատկապես ուշագրավ է հայ հոգեւորականությանն ուղղված անհիմն մեղադրանքները հերքող հատվածը, ուր ոչ միայն նկատելի է հեղինակի՝ արդարությունը բացահայտելու մղումը, այլ նաեւ ճկուն եւ սուր միտքը (նման դրվագները քիչ չեն): Ինքն անձամբ անաչառ շարադրանքի կողմնակից է, բայց երբեք չի զլանում արտահայտել իր հույզերն ու զգացումները, իսկ երբեմն անթաքույց նախանձով է խոսում թե՛ հայ հոգեւորականության, թե՛ աշխարհիկ հայորդիների մասին: Դա հատկապես նկատելի է այն հատվածներում, ուր հեղինակն անդրադառնում է եկեղեցասիրությանը, ուսման ու սերունդների կրթության հանդեպ հոգածությանը, ազգային բարեգործությանն ու գթասրտությանը: Եւ հատկապես Դ. գլխի ավարտին, հայերի եւ Հայ Եկեղեցու մասին խոսքն ամփոփելով, հեղինակն արդեն կոչով է դիմում իր հայրենակիցներին. «Կրթեցե՛ք անուսներին, լուսավորեցե՛ք խավարյալներին, հոգացե՛ք կարոտյալների ու նեղյալների կարիքները, հագեցրե՛ք քաղցն ու ծարավը. քաղց եւ ծարավ… ոչ թե հացի ու ջրի, այլ Աստծու խոսքն ունկնդրելու: Հիմնեցե՛ք դպրոցներ, կառուցե՛ք եկեղեցիներ... Արե՛ք այս ամենը հայերի պես եւ հայերի նմանությամբ…»:

[2] *Հեղինակը դրանք նշում է տողատակում: Մեր ծանոթագրությունները տարբերակելու համար տվել ենք* ծան. թրգմ. *նշումով:*

ԷՌՆԵՍՏ ՍԻԼՎԱՆՈՒՍ ԷՓԼՅԱՐԴ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Գլուխ Գ.
ՀԱՅԵՐԸ

Առասպելական պատմություն: Շամիրամ: Քաղաք Վանի ափին: Հնամենի ժառանգություն: Եդեսիայի Աբգար [թագավորը]: Գրիգոր Լուսավորիչ: Նրա սքանչելի դատողություններն ու իմաստուն գործերը: Եկեղեցի եւ պետություն: Պատմության վայրիվերումներ: Քաղկեդոնի ժողով: Էջմիածնի կաթողիկոս: Սսի կաթողիկոս: Աղթամարի կաթողիկոս: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք: Երուսաղեմի պատրիարք: Եպիսկոպոսներ, քահանաներ, վանականներ: Հայ հոգեւորականության նկարագիրը: Ամերիկացի քարոզիչներն առաջինն են ասպարեզում: Մկրտության հայկական ծեսը: Օծում:

ԻՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ *նախորդ գլուխների, որտեղ ուսումնասիրվող նյութի գերակշիռ մասը բաժին էր ընկնում լոկ կրոնական համայնքներին, այս մեկը՝ Եկեղեցու եւ ազգի մասին է: Հայաստանի [պատմությունը] հառնում է դեպի անհիշելի ժամանակներ: Ժողովրդի նախահայրը Թորգոմի որդին՝ Հաբեթի թոռն է: Լինելով հնամենի միապետությունների կենտրոնում՝ առասպելյալ ու միեւնույն ժամանակ իրական պատմության մեջ հայտնի անուններն են ձեւավորում հայկական տարեգրությունը: Մեզանից՝ անշնորհակալ շառավիղներից շատերը հավանաբար առաջին անգամ են լսում քաջարի [հսկա] Հայկի մասին, որ ծաղկուն հասակում, երբ նոր էր դարձել 300-ամյա, սպանեց կռապաշտության հիմնադիր Բելին, եւ իր գործած սխրանքներով փառաբանված ապրեց 500 տարի: Հայկին հաջորդեց նրա ավագ որդին՝ Արմենակը, ինչպես կարող ենք եզրակացնել՝ արժանավոր մի ժառանգորդ, որ արդեն 350-ամյա էր եւ կառավարեց 96 տարի՝ խաղաղ ճանապարհ ընթանալով իր տասներկու եղբայրների, որ տարվա 12 ամիսների անուններն էին կրում, ինչպես եւ օրվա ժամերի հանգույն անվանված քույրերի հետ: Կան մի քանի՝ միմյանցից տարբերվող կարծիքներ առ այն, թե քանի տարի ժառանգական թագը կրեց նրա որդի Արամայիսը: Ոմանք պնդում են, թե 40, իսկ*

*ոմանք, դատելով [ժամանակագրական] նմանություններից, առավել հիմնավոր են համարում 90 տարվա տեսակետը։ [Իբրեւ] նրա ամենահիշատակելի գործ՝ մատնանշվում է, որ [դրախտի] Գեհոն գետն իր Արաստ որդու անունով՝ Արաքս կոչեց։ Սակայն այդ ժամանակներում ապրած բոլոր նահապետները պատմության դատաստանի առջեւ չնչին են Արամի համեմատությամբ, որն այնքան հրաշազան արարքներ գործեց, որ գրիչն անկարող կլինի դրոշմել անգամ դրանց հարյուրերորդը։ Հավաստի է, որ [նրանց] բացառիկ նվաճումների ժամանակ աշխարհը բարձրաձայնելիս է եղել՝ «Արամի մարդիկ են» (*Aram's men*), որ շուրթերի թեթեւ շարժմամբ ստացավ Արմենյան ձեւը, ուստի եւ երկիրն [սկսեց] կոչվել Արմենիա, եւ ալեզարդ Հայկի արմատից սերող ժառանգության[3] հանգամանքն այլեւս մոռացության մատնվեց [մյուս ժողովուրդների կողմից]։*

Այժմ վավերական մի պատմության մասին[4], որ, սակայն, տեղի է ունեցել բավական ժամանակ անց։ Շամիրամը՝ Նինոսի այրին եւ Նինվեի թագուհին իմացել էր, որ Հայոց արքա Արան հույժ վայելուչ է եւ համակրելի։ Մենք ենթադրում ենք, որ դեպքերի տարին նահանջ էր, երբ Շամիրամը դեսպանների միջոցով առաջարկում էր իր ձեռքն ու [տերության] թագը։ Ու, թերեւս, այն պատճառով, որ Արան արդեն իսկ կին ուներ կամ այրի [թագուհուն] չափազանց ծեր էր համարում, կամ, միգուցե, նա կարծում էր, որ Նինոսի մահը բնական չի եղել, այսուամենայնիվ, Արան արհամարհական պատասխանեց նրա առաջարկին, [ասելով], որ ինքը չի գնա Նինվե։ Այդ իսկ պատճառով Շամիրամը մեծ բանակով արշավեց դեպի Հայաստան։ Տեղի ունեցավ ճակատամարտ, ուր, ի դառն վիշտ Շամիրամի, որ խստիվ հրամայել էր չվնասել Արային, Հայոց արքան սպանվեց։ Մեղքերի քավության համար թագուհին արեց ամենայն հնարավորը. մինչեւ Ասորեստան վերադառնալը նա Արայի նորահաս թագաժառանգին՝ Կարդոսին գահ բարձրացրեց եւ ի հիշատակ արքայի՝ մի շքեղ քաղաք հիմնեց։ [Հայրենիք վերադարձից] կարճ ժամանակ անց այրի սիրահարն [Ասորիքում] գահավեժ լինելով՝ փախավ Հայաստան։ Սակայն մեզ հուզողը ոչ թե [քաղաքի] հիմնադիր տիկնոջ ճա-

---

[3] *Բնագրում այսպ.՝* malleus hereticorum *(լատ.) — բառացի՝ «ուռն (մուրճ) հերետիկոսաց»։ Դիտել ենք իբրեւ վրիպակ* «malleolus herediorum» *ձեւի — «ուռ(ոստ)ից սերող ժառանգություն».–* ծան. թրգմ.*։*

[4] Compiled from Introductory Memoir to "Armenian Researches" — the materials for which were a contribution by Mr. Neumann to the Royal Asiatic Society; a paper by Col. Monteith; and a notice of discoveries by the late lamented traveller, M. Schultz, which appeared in the Paris Asiatic Journal.

կատագիրն է, այլ՝ հենց քաղաքը։ Այն հիմնվել էր Վանա լճի ափին, ուր եւ կանգուն է մինչ օրս Շամիրամակերտ կոչվող քաղաքը, որի [անունից] ընթերցողը հեշտությամբ կառանձնացնի Շամիրամ [արմատը]։ Սակայն լոկ անունը չէ [հետաքրքրականը]։ Քաղաքի հյուսիսային կողմում մի բարձրաբերձ լեռ կա՝ մեջը փորվածք։ Լեռան հարավակողմում կարելի է տեսնել մի բացվածք, որ մեծագույն խնամքով կտրել են մարմարյա (այսպ.) ապառաժի մեջ։ Այն տանում է դեպի կամարակապ առաստաղով մի սենյակ։ Մուտքի ողջ երկայնքով արձանագրություններ են, որ արված են տեղաբնակներին անհայտ գրությամբ։ Այս մուտքը տանում է դեպի սիրտը կամ կենտրոնը լեռան[5]։ Լեռան հյուսիսային մասում՝ ստորոտնյա հատվածում, եւս երեք բացվածք կա, որոնք նույնպես տանում են դեպի նմանատիպ կամարակապ առաստաղներով սենյակներ, եւ դրանց մուտքերին նույնպիսի անծանոթ նշաններով գրեր են։ Մովսես Խորենացին[6] իր «Հայոց Պատմության» մեջ բավականին ընդարձակ է խոսում այս քաղաքի հիմնադրման մասին եւ զանազան տաճարները, հսկայական դղյակներն[7] ու շտեմարան-գանձարանները հիշելուց հետո հավելում, որ բազմաթիվ արձանագրությունները հիացմունքի առարկա են, որովհետեւ դրանք դրոշմելու համար, թվում է, պետք է կարողանային քարը մշակել որպես մոմ։ Մովսես Խորենացին, ենթադրաբար, հենց այս արձանագրություններն է հիշատակել [իր գրքում]։

Հեթանոսականից անցնենք քրիստոնյա Հայաստանին։ [Քրիստոնեության պարագային] այս երկրին աղերսվող հնագույն ավանդություններից մեկը, եթե ոչ հնագույնը, Եդեսիայի տիրակալ՝ Հայոց արքա Աբգարին ուղղված մեր Տեր Հիսուս Քրիստոսի հռչակավոր նամակն է։ Այս Աբգարը հայազն իշխան էր։ Իմանալով Հիսուսի փառքը, որ ինչպես կարդում ենք Սբ. Մատթեոսի Ավետարանում՝ տարածվել էր ողջ Ասորիքով մեկ, ծանր ախտից ազատվելու հույսով Աբգարը սուրհանդակներ ուղարկեց՝ հանձնարարելով բերել աշխարհ եկած մեծագույն Մարգարեի նկարը կամ պատկերը։ Ենթադրաբար այս առաջադրանքը վստահվել էր հայկական հրեաներին[8], եւ ընտրված էր այն պահը, երբ մի տոնի ժամանակ

---

[5] *Տե՛ս* «Missionary Researches in Armenia», *էջ* XXIV.։

[6] *Տե՛ս Զամչյանի «Հայոց պատմութեան» Ավդալի թարգմանությունը։*

[7] *Մովսես Խորենացին գրում է. «...ապարանս ի պէս պէս քարանց... կրկնայարկս եւ եռայարկս... եւ զամենայն.... կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք». գիրք Ա., գլ. ԺԶ.–* ծան. թրգմ.։

[8] *Այսպ.* «Armenian Jews»։

նրանք երկրպագության էին եկել. եւ եթե այդպես է, սրանք են զատորոշման թույլ նշանները։ Ավանդությունն ասում է, թե Աբգարի բանբերները Փիլիպոսին դիմելով՝ ասում են. «Մենք ցանկանում ենք հանդիպել Հիսուսին եւ պատգամը փոխանցել Նրան»։ Այնուհետեւ Փիլիպոսը կանչում է Անդրեասին, եւ նրանք երկուսով գնում են Հիսուսի մոտ։ Սբ. Հովհաննեսի ավետարանում ընթերցում ենք. «էին անդ ոմանք եւ հեթանոսք յելելոցն անդր, զի երկիր պագանիցեն ի տաւնին. Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդայ գալիլեացւոցն էր, աղաչէին զնա եւ ասէին. Տէր՝ կամիմք զՅիսուս տեսանել։ Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրէաս։ Անդրէաս եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս»։ *Ավանդությունն ասում է, որ մեր Փրկիչը Սբ. Թովմայի միջոցով պատասխանեց, թե՝* «Եւ յորժամ համբառնայց՝ առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, եւ կեանս քեզ եւ որոց ընդ քեզ են շնորհեսցէ»[9]։ *Այնուհետեւ վերցնելով ճերմակ վարշամակը՝ Նա սեղմեց այն Իր դեմքին, հետո տվեց պատգամաբերներին, որ փոխանցեն իրենց արքային։ Աբգարն իր ձեռքն առավ վարշամակը եւ Տիրոջ պատկերն այնտեղ տեսնելով՝ խոնարհվեց ու սկսեց երկրպագել՝ սպասելով խոստման իրականացմանը, որ կատարվեց հենց այդ պահին։ Քրիստոսի համբարձումից հետո Թովման Աբգարի մոտ ուղարկեց յոթանասունից մեկին[10]՝ Թադեոսին, որ արքային ուսուցանեց քրիստոնեական հավատքը եւ մկրտեց նրան ու Եդեսիայի բոլոր բնակիչներին։*

Չորրորդ դարի սեմին կա՛մ բազմաց սերն էր սառել, կա՛մ ասպատակիչները ջնջել էին Հայ [հավատքը], որպես մեր պարագային անգլոսաքսոն նահապետները կործանեցին Բրիտանական Եկեղեցին։ [Ինչեւէ. Դ. դարասկզբին] նոր առաքելության ազատ ասպարեզ էր բացվել, եւ այդ գործի համար կոչվեց Գրիգոր Լուսավորիչը՝ նորադարձ պարթեւ, ազնվական, եթե ոչ արքայական տոհմից, որ Ավետարանի ճշմարտությունն ուսանել էր Կեսարիայի դպրոցներում, իսկ մարդկային իմացությունը հղկել Աթենքում։ Միավորելով ջերմեռանդ նախանձախնդրությունը եւ առողջ դատողությունն ու լայնախոհ խորաթափանցությունը, որտեղ էլ

---

[9] Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն, Բ., գլ. ԼԲ.*– ծան. թրգմ.։

[10] *Հայաստան եկած առաքյալին ոմանք համարում են մեկը տասներկուսից, ոմանք՝ յոթանասուներկուսից։ Սբ. Գրիգոր Տաթեւացին հետեւյալ բացատրությունն է տալիս. «Եւ կենսաբուղխ սուրբ Աւետարանն զԹադէոս առաքեալն մեր յերկոտասանիցն ասէ... Եւ այս է պատճառն, որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ եւ վարդապետ էր. որպէս Պետրոս երկոտասանիցն. եւ առաջինքն ամենուրեք յետնոցն անուամբ կոչէին. այս է ստոյգ պատճառն». «Գիրք հարցմանց», Երուսաղէմ, 1993, էջ 549.*– ծան. թրգմ.։

որ քարոզեր (հազիվ թե գտնվի մի ավան, մի գյուղ, ուր նա չի քարոզել), Գրիգորը հիմնում էր դպրոցներ, որպեսզի պահպանի ու արմատապես դրոշմի իր դասերը։ Գրիգոր Լուսավորիչը զտեց հանրային պաշտամունքը, բայց [անաղարտ] պահեց սրբազնական կարգը։ Բելիարի քուրմերը դարձան Աստծու եւ Փրկչի նվիրյալ սպասավորներ։ Իսկ այն վայրերը, որ անկեղծ, սակայն սխալ պաշտամունքի կենտրոն էին հանդիսացել, վերստին օծվեցին՝ ստանալով առավել պայծառ հանգամանք եւ իրական սուրբ կոչում։ Հայքի մայր տաճարը կառուցվել է ճիշտ այնտեղ, ուր նախկինում հառնում էր Վահագնի կուռքը[11]։ Պահպանել, որովհետեւ կորուսյալը վերականգնելը դյուրին չէ. այս էր ուղին, որին ապավինել էր Գրիգորը։ [Պահել] ձեւավորված սովորույթներն ու արմատավորված հավատալիքները, բարեպաշտությունը՝ պարզապես փոխելով դրա ուղղվածությունը, զգույշ եւ նրբանկատ ձեւով՝ առանց ավելորդ բռնության։

Եւ չորրորդում ուսմունքին տված զարկն իր պտուղները տվեց հինգերորդ դարում։ Նախնական շրջանում նրանց գրավոր լեզուն օտար էր՝ հունարեն կամ ասորերեն, հետագայում հայերն ստեղծեցին իրենց ուրույն գրավոր լեզուն։ Համարվում է, որ հայոց այբուբենն ստեղծվել է 406 թվականին։ Նույն դարում Աստվածաշունչը «Յոթանասնից» օրինակից թարգմանվեց հայերեն, եւ այն Հայաստանում պահպանված հնագույն գիրքն է։

Եւ մինչ Եկեղեցին իր ներքին հզորացման ճանապարհին էր, միեւնույն պահին նա ստիպված էր դիմակայել արտաքին փորձություններին։ Հայաստանը երկար ժամանակ եղել է պարսկական լծի ներքո։

---

[11] *Բնագրում՝* «Hercules» *(Հերկուլես)։ Ի նկատ ենք առել, որ այստեղ խոսքը ոչ թե Վաղարշապատի Մայր Տաճարի մասին է (*«The mother church of Armenia»*), այլ՝ Աշտիշատի եկեղեցու հիմնադրման։ Ըստ Ագաթանգեղոսի՝ «Եւ իբրեւ եկն եհաս ի սահմանս Հայոց՝ լուաւ Գրիգորիոս, թէ Վահէվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարաւնոյ. մեհեանն մեծագանձ, լի ոսկւով եւ արծաթով, եւ բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձաւնեալ անդ. ութերորդ պաշտաւն հռչակաւոր, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ եւ անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ յԱշտիշատ» (ՃԺԴ.)։ Գրիգոր Լուսավորչի վարքի հունարեն եւ լատիներեն տարբերակներում համապատասխանաբար՝* «Ἡρακλέους» *եւ* «Herculis» *ձեւերն են. տե՛ս* «Patrologie cursus completus», Tomus Secundus, Parisiis, *էջ 989, 990։ Մովսես Խորենացին Վահագնի առնչությամբ նշում է՝ «...նմանագոյնս զՀերակլեայ» (գ. Ա., գլ. ԼԱ. (ԼԲ.)։ Արդեն Միքայել Չամչյանի տողերում («Պատմութիւն Հայոց», հտ. Ա., Վենետիկ, էջ 120) Վահագնը «գործեաց մեծամեծ գործս արութեան հանգոյն Հերակլեայ՝ այս ինքն Հերքիւլէսի»։ Անգլերեն թարգմանության մեջ հատվածն ստացել է այս տեսքը.* «His [Vahagn's] personal strength and courage were so great, that he was usually called by his subjects Hercules the Second». *տե՛ս* Fr. Michael Chamich, History Of Armenia, Translated by J. Avdall, Calcutta, *1827, էջ 43.– ծան. թրգմ.։*

Իսկ վերջիններիս կրոնն [այդ շրջանում] զրադաշտականությունն էր։ Եւ երբ Աստվածաշունչը թարգմանվում էր հայերեն, պարսիկները փորձեցին ջնջել քրիստոնեությունը։ Հատուկ հրովարտակով սահմանվում էր [պարսից] ազգային կրոնի՝ զրադաշտականության գերազանցությունը, եւ քրիստոնեությունը դիտվում էր իբրեւ խոտելի։ Ու թերեւս կարելի է կարծել, որ սա կատարելապես համընկնում է պետական կրոնի հետեւողական քաղաքականությանը։ «Այլ զոր օրէնս տէրս ձեր ունի (այսօր եւս պնդումն այս չի հնացել), զնոյն եւ դո՛ւք կալարուք. մանաւանդ զի եւ առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ»[12]։ Եպիսկոպոսաց ժողովն ի պատասխան կազմեց ու հղեց մի թուղթ, որում նրանք մեկնում էին Ավետարանի վարդապետությունը, ինչպես նաեւ ի ցույց էր դրվում նրանց հոգածությունը պետության անսասանության ու մարդկանց բարօրության հանդեպ։ Եպիսկոպոսների այս ընդվզումն ընդունվեց իբրեւ անարգանք [Պարսից] արքայի նկատմամբ։ Հայ երեւելի իշխանները հրավիրվեցին ատյան եւ բացորոշ իրազեկվեցին, որ այսուհետ անհնազանդության ցանկացած դրսեւորման համար կզրկվեն ունեցվածքից եւ կդատապարտվեն մահվան։ Եւ մինչ նրանք վճռել էին առերեսվել վտագույնին, բայց չենթարկվել, արքայի բարձր հավանությունը վայելող մեկը, ժամանակ շահելու համար նրանց համոզեց [առերես դավանափոխ] ձեւանալ։ Արքայական կամքին հնազանդ լինելու պատրաստակամությունն իմանալով՝ նրանց թույլ տվեցին վերադառնալ իրենց տները, [եւ վերադառնալ] ոչ թե շղթայակապ, այլ՝ ընծաներով։ [Հայ] իշխաններին հետեւեց [պարսից] քուրմերի ու մոգերի խումբը (յոթ հարյուր հոգի), ինչպես եւ օժանդակ ուժերը, որ գրեթե քսան անգամ գերազանցում էին նրանց ու գալիս էին իրենց թրերով ուղենշելու [օտարախորթ] կրոնը [ճանաչելու] ամենակարճ ճանապարհը։ Սրանց առաջին գործը եղավ այն, որ հրամայվեց վեց ամսվա ընթացքում խոնարհել քրիստոնեական պաշտամունքի բոլոր տաճարները, բռնագրավել գրքերը. քահանաներին արգելվեց ուսուցանել, իսկ մենաստանները ենթակա էին ավերման։ [Սահմանվում էր նաեւ], որ մոգական ծեսը հարկադրաբար եւ բծախնդրորեն պետք է կատարվի։ Այս հրամանի հրապարակումը խոր արձագանք գտավ։ Ունեւոր խավի [մի մասն] ու [որոշ] մեծ հողատերեր շտապեցին իրենց անվերապահ համաձայնությունը տալ։ Ուսյալների եւ լուսավորվածների համար մազդեզականությունը նոր ասպարեզ էր բա-

[12] ԵՂԻՇԷ, *Բ. յեղանակ.*– ծան. թրգմ.։

ցում. նրանց առարկություններն անհետացան։ Պետական պաշտոնյաներն անձայն երեսները շրջեցին դեպի արեւելք ու երկրպագեցին ծագող արեգակը։ Սակայն, հոգեւորականության մեծամասնությունն անդրդվելի էր. նրանց հետ էին նաեւ հասարակ ու պարզ մարդիկ։ Եկեղեցու դռները փակելու՝ զինված ուժերի անհաջող փորձը կայծ հանդիսացավ. ոտքի ելան զինված զանգվածներն ու երկարատեւ պայքարից հետո, որի ժամանակ երկու կողմերն էլ հաճախ գործեցին անզգույշ եւ անզուսպ քայլեր, վերականգնվեց խաղաղասեր ու հանդուրժողական վերաբերմունքը Հայ Եկեղեցու հանդեպ։

Յոթներորդ դարը մահմեդականների համար ռազմական հաջողությունների շրջան հանդիսացավ. կործանվեց պարսկական հարստությունը, ու նրա ավերակների վրա հառնեց արաբական խալիֆայությունը։ Իններորդ դարի վերջերին, երբ խալիֆների իշխանությունն անկում էր ապրում, քմահաճության կամ գուցե քաղաքական ցնցման արդյունքում Բաղդադի խալիֆը Հայոց կախյալ իշխանին արքայական թագ շնորհեց։ Սակայն այս տիտղոսի շնորհումը իշխանության հզորացում չէր խոստանում։ Հայաստանի թագավորը չէր կարող ո՛չ ճնշում գործադրել իր ենթականների վրա, ո՛չ ընդդիմանալ զավթիչի [կամքին]։ Հարավային գավառները բացահայտ հրաժարվեցին հավատարմությունից, հյուսիսայինները դժկամորեն եւ կասկածելի խոնարհությամբ էին հայտնում իրենց հպատակությունը. հաջող ապստամբությունների արդյունքում ի հայտ եկող մանր թագավորություններն ու իշխանություններն արագ հերթագայությամբ իրար էին հաջորդում։

Տասնմեկերորդ դարում՝ Հռոմեական կայսրության կործանման գործում անուրանալի ավանդ ունեցած բարբարոս հորդաների ժառանգորդ թուրքերը, տարափի պես հեղեղեցին տարաբախտ երկիրը՝ հօդս ցնդեցնելով տեղական իշխանների մրցակցության ցանկությունը, ինչպես եւ կայսրության ու խալիֆաթի հավակնություններն ու նկրտումները՝ այդ ամենի փոխարեն հաստատելով դաժան ու աններում զավթողի իրավունքը։ Հետագայում Հայաստանը դարձավ թուրքական գավառ։ Կիլիկիան՝ հնամենի թագավորության բեկորը, շարունակեցին կառավարել հայրենի արքայական հարստության անդամները, որ գորովալից հոգատարությամբ էին խնամում հայրենիքը, եւ իրենց [շնորհված իշխանությունը] դիտարկում էին իբրեւ ընձեռյալ մեծագույն հնարավորություն՝ մեղմելու այն տառապանքները, որ թուրքերն ու մոնղոլներն էին

պատճառում։ Հայկական թագավորության այս վերջին նշույլը վերացավ 1375-ին, երբ Կիլիկիան բռնակցվեց Եգիպտոսին։ ԺԷ. դարում Շահ Աբբասն իր բնագիծը Թուրքերից պաշտպանելու համար սահմանի մի մասը՝ Հայաստանը, բառացիորեն վերածեց անապատի, որ եզակի բացառություն էր Արեւելքի պատմության մեջ. հայրենի ակութին խարսխվող հուշերի եւ ազգային կապերի ոչնչացմանը զուգընթաց՝ աղետալի վիճակն ավարտվեց։ Հսկայական տարածքներ ամայացան, իսկ բնակիչներն, իրենց ընտանիքներով ու ինչքով, ապահով տեղափոխվեցին Պարսկաստան, ուր Սպահանի բարեբեր մի արվարձանը հատկացվեց նրանց։ Նրանց հարկային արտոնյալ պայմաններ շնորհվեցին, հատուկ իրավունքներ, որոնց շարքում պակաս կարեւոր չէր իրենց կրոնն ազատ դավանելու իրավունքը։ Այդ ժամանակներից ի վեր՝ մինչ օրս Հայաստանը շարունակում է առերեսվել չարիքներին, որոնց ենթակա են մեծ եւ չարանախանձ տերությունների սահմանակից երկրները։ Ներկա դարում, ի հավելումն Թուրքիայի եւ Պարսկաստանի, ասպարեզ իջավ հյուսիսի սառնաշունչ պայմաններում թրծված մի երրորդ ուժ, իր ոտքն ամուր հաստատեց զգալի տարածքներում, եւ կասկածից վեր է, որ կհաջողի Հայաստանն իրենը դարձնելու իր ձգտումներում։

Վերադառնանք հոգեւոր հարցերին։ Մինչ 451-ի Քաղկեդոնի ժողովը՝ Հայոց Եկեղեցին Արեւելյանի անբաժան մասն էր։ Տիեզերաժողովից հետո քառասուն տարի շարունակ դժգոհությունը գնալով ավելանում էր, մինչեւ որ 491 թվականին գումարված ժողովում հայերը, Քաղկեդոնի որոշումների պաշտոնական մերժմամբ, բաժանվեցին Տիեզերական եկեղեցուց եւ դարձան անկախ համայնք։ Խզման պատճառը մի հարց էր, որի քննարկումը երբեք չդադարեց. այն է՝ Աստծու Որդու բնության խնդիրը։ Հայերն անդրդվելի մնացին եւ պաշտպանեցին միաբնակության գաղափարը, որը մերժվել էր Քաղկեդոնի ժողովում։ Սակայն, բացի վեճի առարկա դարձած հիմնադրույթներից, որեւէ կարեւոր փոփոխություն ի հայտ չեկավ։ Եկեղեցական իշխանության սկզբունքն ինչպես եւ աստիճանակարգությունը մնացին նույնը, կարգապահական համակարգն՝ անփոփոխ։ Շարունակվեց առօրյա պաշտամունքը, պահպանվեցին ծեսերն ու արարողությունները, եւ ինչպես կաթոլիկ, նույնպես եւ հայոց եկեղեցիների խորաններում Սբ. Պատարագը երգվում էր, եւ երկրպագությունը կատարվում էր շնչին տարբերություններով. այս էր սկզբունքը։ Արմատի եւ ոստի տեսությունները, որ հայտնվեցին տասնվեցերորդ դարում դեռ անծանոթ էին հին անջատողականներին։

Դեպքերի հետագա ընթացքին մի որոշ միջոց հույն կայսրերը Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատեցին եւ հերձվածի առաջացրած բաժանումն ամոքելու ջանքեր գործադրեցին: Այդ ջանքերն իրավամբ արժանի էին գովասանքի, բայց ոգին, որով իրագործվում էին դրանք, խաղաղական եւ հաշտեցուցիչ չէր, ուստի եւ չիրականացավ ոչինչ, ընդհանրապես ոչինչ: Իսկ Կիլիկյան Հայաստանի փոքրիկ թագավորությունը, որ Տավրոսյան լեռնաշղթայով բաժանված է Արեւելյան կայսրությունից, իր ծնունդն առավ Կեսարիայի եպիսկոպոսի գաղջ եւ անիմաստ վիրավորանքի արդյունքում: Հատուկ դիտավորությամբ շարժվող եպիսկոպոսը, լսելով մի հայ արտաքսյալ իշխանի մասին, իր շանն Արմեն էր անվանել: Կրքերին տեղի *տալով՝ վտարանդի ազնվականը տեղում սպանեց անարգող առաջնորդին՝ փրկագինը վճարելով իր կյանքով: Սակայն նրա ազգական եւ ընկերակից Ռուբենը բարձրացրեց հաջողակ ապստամբության դրոշը, եւ նրա ժառանգները գրեթե երեք դար կառավարեցին Կիլիկյան Տավրոսում*[13]*: Ռուբինյան հարստության ներկայացուցիչները [արվեստի եւ հատկապես] գրականության հովանավորներ էին, եւ իրենց կառավարման շրջանում Սեւ լեռան վանքերից [ապագա] անվանի հեղինակներ էին դուրս գալիս:*

Հայ Եկեղեցու ամենաբարձրաստիճան հոգեւորականը Կաթողիկոսն է: Այս բարձր կոչումը կրում է երեք անձ, եւ նրանց է վերապահված եպիսկոպոսների ձեռնադրությունը եւ սուրբ յուղի օծումը: Նրանք են Սբ. Էջմիածնի, Սսի եւ Աղթամարի հայրապետները: Այս վերջինս ինքնակոչ է, որին օրինականացրել են պետական հրովարտակով: Սբ. Էջմիածնի Կաթողիկոսն անվանապես Հայ Եկեղեցու առաջնորդն է, եւ ներկայումս միայն նա է եպիսկոպոս ձեռնադրում եւ օրհնում սուրբ յուղը, սակայն նրա փաստացի իրավասությունը սահմանափակ է: Թուրքական Հայաստանը, օրինակ, ենթարկվում է Կոստանդնուպոլսի պատրիարքին, եւ երբ ռուսները գրավեցին Սբ. Էջմիածինը, չարակն բարձր դուռն ստիպեց, որ Կաթողիկոսի անունը չհիշատակվի Կոստանդնուպոլսում կատարվող պատարագների ընթացքին: Կաթողիկոսի եկամուտի աղբյուրներն են՝ սուրբ յուղի օրհնության ստացվածքը, Սբ. Գրիգոր Լուսավորչի հիմնադրած [եւ ժամանակի] կաթողիկոսի առաջնորդանիստ եւ մշտական բնակության վայր հանդիսացող վանական համալիր այցելող ուխտավորների նվի-

[13] *Կիլիկիայի վերջին հայ թագավորը Լեւոն Զ. գահընկեց արվեց, բանտարկվեց եւ մի քանի տարի մնաց մամլուքների գերության մեջ: Ազատություն ստանալով անցավ Եւրոպա եւ մնաց այնտեղ, մինչեւ իր մահկանացուն կնքեց Փարիզում. 19 նոյեմբեր 1393 թ.: Թաղվել է Սելեստինյան վանքում:*

բատվությունները, ինչպես նաեւ իր թեմական եպիսկոպոսներից ու վանքերից եկող գումարներն ու «առաջին պտուղը»։ Պարսկական տիրապետության շրջանում կաթողիկոսն անգլիական 400 ֆունտին համարժեք տարեկան հաստատուն հարկ էր վճարում նրանց։ 1830 թվականին պարոնայք Սմիթն ու Դուայթը (ամերիկացի քարոզիչներ, որոնց պարտական եմ ներկա ակնարկիս նյութերի համար) այցելեցին Սբ. Էջմիածին։ Նրանք [տեղեկացան, որ] ժամանակի կաթողիկոսը, որը նախկինում Ռուսա-Հայաստանի գավառներից մեկի թեմական եպիսկոպոսն էր եղել, 1810-ին ձեռնադրվելիս օծման արարողության ընթացքին կրել է հայրապետական շքեղ զգեստներ, որ [ռուսաց] կայսեր բարեպաշտության եւ առատաձեռնության վառ օրինակ էին։ 1822 թվականին՝ թուրք-պարսկական պատերազմի ժամանակ, նա տեղափոխվեց ռուսական [տիրապետության ներքո գտնվող] տարածքներ, ուր ընդունվեց մեծագույն հարգանքով ու պատկառանքով եւ հաստատվեց Հաղպատի վանքում, մինչեւ որ Պարսկաստանի հետ կնքված դաշնագրով Էջմիածինը եւս անցավ ռուսական կողմին։ Քարոզիչների այցի ժամանակ կաթողիկոսն արդեն առաջացյալ տարիքի էր եւ տկար։ Այդ ժամանակ մի շարք ծեսեր եւ արարողություններ էին ընթանում, որոնց կոչված էր մասնակցելու նաեւ կաթողիկոսը, եւ նա այնքան էր խոնջացել, որ անգամ չկարողացավ ընդունել քարոզիչներին։ Նա հանդարտության վեհ տիպար էր, մեղմ էր ու հանդուրժողական։ Սբ. Գրիգորի միաբանությունը, ուր բնակվում է կաթողիկոսը, նկարագրում են իբրեւ մեծ քաղաքի մանրակերտ, որ ներառում է այն ամենն, ինչ անհրաժեշտ է նվիրումի եւ բարեպաշտության, ուսման եւ սպասավորության, ասպնջականության համար։ Միսիոներներն այցելել էին ներկա գտնվելու Վեհափառի գահակալության տարեդարձին նվիրված արարողություններին։ Տոնակատարության նախօրեին նրան մեծ շուքով ուղեկցեցին գիշերային ժամերգության։ Պաշտամունքային զգեստներով վանականները շարվեցին եկեղեցի տանող ճեմուղու երկայնքով, եւ կաթողիկոսը՝ վեղարին ոսկյա խաչ, ձեռքին հովվական գավազան եւ բոսոր ամպհովանին գլխավերեւում, անցավ նրանց միջով։ Երկու-երեք սարկավագներ նրա առջեւից հետընթաց շարժվելով՝ մշտապես խնկարկում էին նրան։ Մինչեւ վերջերս իր վիճակում կաթողիկոսի իշխանությունը գերակա էր, սակայն վերջին տարիներին, հիմնականում հայ երեւելի հոգեւորականներից մեկի՝ Վրաստանի եպիսկոպոս Ներսեսի ազդեցությամբ, ջանքերով եւ իր իսկ գլխավորությամբ եկեղե-

ցական ժողով գումարվեց, ուր խորհեցին իշխանության մեծ մասն իրենց ձեռքը վերցնելու մասին։

Այն շրջափուլերում, երբ բուն Հայաստանն ուրույն իշխանություն ուներ՝ անկախ կամ արքա-փոխարքայի կառավարման ներքո, կաթողիկոսը բնակվում էր մայրաքաղաքում՝ գործոց եւ ազդեցության կենտրոնում։ Թուրքերի ներխուժումն ու նվաճումները կործանարար վիճակի հանգեցրին։ 1060 թ. նա սեփական ապահովության համար հեռացավ դեպի Տավրոսի լեռնային ամրոցները։ Հետագայում կաթողիկոսը տեղափոխվում է Սամոսատի արեւմուտքում գտնվող՝ Սեւ լեռան վանքերից մեկը։ 1125 թ. Զորրորդ Հայքի մի փոքրիկ իշխանություն կցվեց Աթոռին։ Կաթողիկոսը խելամտորեն մեկնեց իր իշխանազուն [եղբոր] հետ՝ վերջինիս Ծովք ամրոցում բնակվելու։ Քսաներկու տարի անց անհագուրդ թուրքերն ավերեցին իշխան-կաթողիկոսի դղյակը, ուստի 1147-ին նա հեռացավ Հռոմկլա՝ Սամոսատից ներքեւ՝ Եփրատի արեւմտյան ափին գտնվող մեկ այլ ամրոցում ապաստան գտնելու։ 1294 թվականին եգիպտացիներն ավերեցին Հռոմկլան, եւ կաթողիկոսը, որ հարկադրված էր պանդխտել երկրով մեկ, [հայրապետական Աթոռը] տեղափոխեց Սիս՝ Ռուբինյան արքաների մայրաքաղաքը, ուր այն հաստատվելու եւ մնալու էր ավելի երկար, քան իր իսկ հովանավոր արքաները։ Աստանդականը բարիք չի դիզի, եւ Սսի կաթողիկոսը բացառություն չէ. նրա իշխանությունը հույժ սահմանափակ է։ Էջմիածնի կաթողիկոսությունը նախաթոռ է, եւ ինչպես կարող ենք տեսնել՝ Կոստանդնուպոլսի պատրիարքը ներկայումս [Սսի կաթողիկոսությունը] մերկացրել է [երբեմնի փառքից]՝ թողնելով առանց հեղինակության։ 1114 թվականին, երբ Սսի կաթողիկոսը տակավին Սեւ լեռներում էր, Վանա լճի Աղթամար կղզու միաբանության վանահայր եպիսկոպոսն ինքնահռչակվեց կաթողիկոս։ Նրա այս քայլը դատապարտվեց, իրեն հայտարարեցին Եկեղեցուց արտաքսված ու բանադրեցին, եւ նզովքներն առ ոչինչ համարվեցին լոկ հարյուր ութսուն տարի անց։ Աղթամարի կաթողիկոսն արդեն Հայ Եկեղեցու հետ սերտ միաբանության մեջ է եւ առաջնորդում է Քուրդիստանի թեմերը։

Հայոց նվիրապետության երկրորդ ամենաբարձր աստիճանը պատրիարքինն է։ Կոստանդնուպոլսի պատրիարքն իր դիրքով եւ հեղինակությամբ առաջինն է։ Նա չի կարող եպիսկոպոս ձեռնադրել կամ օրհնել սուրբ յուղը, սակայն Երուսաղեմի պատրիարքից բացի (որն անկախ է), Թուրքա-Հայաստանի ողջ տարածքով Կոստանդնուպոլսի պատրիարքն իր

հայեցողությամբ կարող է նշանակել, հեռացնել կամ դարձյալ ետ կանչել, անգամ աքսորել բարձրաստիճան հոգեւորականների, տրոհել կամ միավորել նրանց թեմերը: Նա անմիջական իշխանություն ունի քահանաների եւ իր հոտի անդամների նկատմամբ: Ունի նաեւ պատրիարքական արգելարան, ուր բարի նկատառումներով կարող է բանտել՝ ում կամենա: Այս կապակցությամբ վերջին հիշատակությունը երկու հոգեւորականի մասին է, որ Հռոմի հավատքն էին ընդունել: Ռուս դեսպանի միջամտությամբ մեկն ազատվեց կալանքից՝ իբրեւ կայսեր հպատակ, իսկ մյուսը շարունակեց փակի տակ մնալ այնքան ժամանակ, մինչեւ որ հրաժարվեց [օտար] հավատքից: Մահմեդական կառավարման գաղափարն այն էր, որ ռայաների[14] ցանկացած կրոնական համայնք կամ բոլոր՝ ոչ թուրք հպատակները պետք է ներկայացուցիչ կամ երաշխավոր-առաջնորդ ունենան մայրաքաղաքում: Եւ այսպիսով, [Կոստանդնուպոլսի] Հայոց պատրիարքը ոչ միայն իր Եկեղեցու, այլ նաեւ Հակոբիկյան ասորիների ներկայացուցիչն է, քանի որ նրանք չունեն նման մի անձ: Հայերի եւ թուրքական կառավարության միջեւ բոլոր կապերն ու շփումներն իրականացվում են պատրիարքի միջոցով: Սսի կաթողիկոսը, մնացյալ եպիսկոպոսների պես, կարող է լոկ նրա միջոցով ֆերման կամ հրավարտակ ստանալ: Կոստանդնուպոլսի պատրիարքի եկամուտները հիմնականում գոյանում են պաշտոնի նշանակվող կամ ծառայության մեջ գտնվող եպիսկոպոսների տուրքերից: Նույնիսկ կանոնական առումով նրանից բարձր գտնվող Սսի կաթողիկոսն է մնացյալ [եպիսկոպոսներ]ի նման մասնաբաժին վճարում: Իսկ եթե որեւէ շռայլ ձեռնարկի արդյունքում պատրիարքը հայտնվի վճարման հեռանկար չունեցող պարտքերի տակ (նման բաներ նույնիսկ պատրիարքների հետ են պատահում), վստահաբար, երեւան կգա մի հայ մեծահարուստ-ձեռներեց եւ կլուծի նրա [խնդիրները]: Պատրիարքը, որին ամերիկացի քարոզիչները հանդիպեցին 1830-ին, բնութագրվում է հետեւյալ կերպ. «Նա մոտ քառասունհինգ տարեկան՝ մարմնեղ մի մարդ էր, շփվելիս՝ բարյացկամ ու հաճոյախոս, եւ թվում էր, թե գերագույն ջանքեր է գործադրում իր դեմքի եւ լեզվի [մկանների վրա], որպեսզի հասկանանք, թե որքան է սիրում մեզ եւ որքան է ուրախացել մեր այցելության հանգամանքով»: Նրանք ակնարկում են, թե պատրիարքը հույժ սրտաբաց էր իրենց հանդեպ. գուցե իսկապես... «Փաստորեն մենք դժվարությամբ խուսափեցինք նրա դղյակում գիշերելու հեռանկարից»:

[14] *Ոչ մահմեդական հպատակ.*– ծան. թրգմ.:

Պատրիարքին ընտրում են արքեպիսկոպոսները եւ հայկական համայնքի՝ մայրաքաղաքում բնակվող առավել հարուստ աշխարհիկ անդամները։

*Երուսաղեմի պատրիարքը պարտական է այն պատկառանքին, որ սուրբ Քաղաքը դրսեւորում է այն արտոնությունների եւ առանձնաշնորհների հանդեպ, որոնք ինքը վայելում է. չնայած Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոսները իրենց ձեռքերը դրեցին այդ սրբազան հաստատության վրա եւ պատրիարքին անձամբ հաշվի են կանչում, երբ հարմար նկատեն։ Պարոնայք Սմիթն ու Դուայթը Զմյուռնիայում հանդիպել են եպիսկոպոսի պարտականություններ ստանձնած մի նախկին պատրիարքի։ Եւ [իր անկման] պատճառն այս էր. Երուսաղեմի Սբց. Հակոբյանց վանքը լուրջ պարտքերի տակ է հայտնվում։ Եպիսկոպոսներն՝ իբրեւ ձեռներեց մարդիկ, եկամուտներն արգելանքի տակ են դնում եւ հիմնում են կառավարման հանձնախումբ՝ չթողնելով պատրիարքին ոչ մի [լիազորություն], բացի ելեւմտից անդորրագրերն ստորագրելուց։ Ինչեւէ, անխոհեմ քայլերն ավելացրին միաբանության պարտքերը։ Ամենազորից ոչնչության վերածվելն այնքան էլ ընդունելի հեռանկար չէր... Հանձնախմբի [անդամներին] եւս նա սիրահոժար չընդունեց։ Իրականում, եթե կարող ենք պատկերացնել պատրիարքին նման գործողություն կատարելիս, նա պարզապես դուռը շրխկացրեց նրանց դեմքին եւ հորդորեց իրենց գործին նայել։ Հանձնաժողովականները զեկուցեցին եպիսկոպոսներին, իսկ վերջիններս Կոստանդնուպոլսի պատրիարքի միջոցով գանգատվեցին սուլթանին։ Կարճ ժամանակ անց Սբց. Հակոբյանց վանք հասավ [սուլթանի] հրովարտակը, որ պատրիարքին հորդորում էր, ի սեր իր իսկ առողջության, թարմացնել միջավայրն ու օդափոխվել։ Եւ այդ օրվանից սկսյալ՝ զմյուռնիացիների եպիսկոպոսն առնվազն Երուսաղեմի պատրիարք պիտի լինի։ Սբց. Հակոբյանց վանքի եւ իր առաջնորդի մասին պարոն Ջոուեթն (*Jowett*) իր «Christian Researches» պարբերականում (4 դեկտեմբեր, 1823) գրում է. «Մի քանի օր առաջ նամակով Հայոց պատրիարքին ուղարկելով իրեն նվիրված [հոդվածիս նախաբանը]՝ այսօր առավոտյան այցելեցի հարցազրույց վերցնելու։ Այս վանքն անհամեմատ ավելի ճոխ է, քան որեւէ այլ շինություն Երուսաղեմում։ Պատրիարքը նստած էր իշխանավայել մի բազմոցի եւ խոսում էր դանդաղ ու արժանապատիվ։ Նա գանգատվեց, որ տկար է եւ թողեց բազմոցին՝ հանդիպակաց կողմում նստած իր երկու եպիսկոպոսներին, որ շարունակեն զրույցը։ Պատրիարքի քարտուղարն ինձ տա-*

րավ եկեղեցին տեսնելու։ Այն ավելի շքեղ է, քան որեւէ այլ կառույց Երուսաղեմում՝ չբացառելով անգամ Սբ. Հարության տաճարը, չնայած վերջինս անհամեմատ մեծ է։ Հայկական եկեղեցու պատերը երեսպատված են հոլանդականի պես ջնարակված խեցեղենով՝ զարդարված սրբազան պատմության պատկերներով եւ հայերեն արձանագրություններով։ Մի կողմում փոքրիկ մատուռ է՝ փայլուն կերպով զարդարուն եւ պայծառացած Սբ. Հակոբի գլխի պատկերով։ Իսկ երբ կանգնած եք դեմքով դեպի եկեղեցու գլխավոր խորանը, ձախից ընդարձակ եւ հիանալի բեմ է, բայց քարոզներ այստեղ չեն խոսվում, այն սովորաբար օգտագործվում է թափորների համար, որի ընթացքին քահանաներից կամ սարկավագներից մեկը՝ ճոխ զգեստավորմամբ եւ լուցյալ մոմերով, հանդիսավոր ելնում է բեմ եւ ընթերցում, իսկ ավելի հաճախ՝ արտասանում ավետարանական հատվածներ։ Բարձր առաստաղից մեծ թռչունների հավկիթներով[15] կախված են անհամրելի քանակության կանթեղներ, որոնք մշտապես մաքուր են պահում փետրասաղարթ ճյուղերով զինված սպասավորները։ [Այստեղ] ամեն բան հագեցած է արեւելյան ճոխությամբ»[16]։ «The Crescent and the Cross»-ի հեղինակն ասում է. «Հայոց միաբանությունն ամենապատշաճավորն է, եւ Սուրբ Հարության տաճարում նրանց է պատկանում ամենից զարդարուն աղոթարանը, որ հունականի հարեւանությամբ է»[17]։ Լորդ Քեսըլրին, իր հետաքրքրական շրջագայության մեջ նկարագրելով իր զրույցը պատրիարքի հետ, նշում է, որ այնտեղ հաստատված էր մի անգրաղ գահավորակ՝ ի պատիվ Սուրբ Հակոբի, որ [միաբանության] գլխավոր հովանավոր սուրբն է եւ Երուսաղեմի առաջին պատրիարքը։ Երուսաղեմի պատրիարքը Սիրիայում ունի տասնչորս քորեպիսկոպոս։ Նրա վիճակն ընդգրկում է Եգիպտոսն ու՝ Աքքա, Դամասկոս ու Տրիպոլի [քաղաքները հարակից] տարածքներով։ [Երուսաղեմի] պատրիարքը հարկ է վճարում թե՛ Դամասկոսին, թե՛ Կոստանդնուպոլսին. վերջինիս պարագային գումարն ուղղվում է անմիջականորեն սուլթանին։ Պատրիարքն ստանում է անվանական հրովարտակներ [սուլթանից], ուստի այս եւ նման հանձնառությունների համար նա մշտական ներկայացուցիչ ունի մայրաքաղաքում։ Մի կարճառոտ պահ

---

[15] *Հավկիթները կոչված էին խոշընդոտելու դեպի կանթեղի յուղը ձգտող կրծողների ընթացքը։ Կանթեղի շղթաներով մագլցող վնասատուները սայթաքում էին եւ ընկնում փայլուն հավկիթների վրայից։ Այժմ եւս Սուրբ Երկրի տաճարներում կանթեղները կախվում են հավկիթի նմանությամբ պատրաստված խեցեղենից.*– ծան. թրգմ.։

[16] Vol. ii. p. *231*.

[17] Vol. i. p. *181*.

Երուսաղեմի պատրիարքն ստանձնեց կաթողիկոսական գործառույթներ՝ եպիսկոպոսներ ձեռնադրեց եւ մեռոն օրհնեց. բայց շուտով նա հրաժարվեց իր հավակնություններից: Նրա եկամուտը գոյանում է ուխտավորների նվիրատվություններից, առաջնորդ եպիսկոպոսների տուրքերից, մեծատունների ընծաներից եւ վանքերի գույքից:

Եպիսկոպոսներն իրենց աստիճանով ու դասով հավասար, իսկ իրավասությամբ ցածր են պատրիարքներից: Նրանց մասնավոր իրավունքն է իրենցից ցածր աստիճանավորների օծումը: Թեմական եպիսկոպոսներից բացի, կան նաեւ քորեպիսկոպոսներ եւ վանաբնակ եպիսկոպոսներ, որ զուրկ են եպիսկոպոսական իշխանությունից: Նրանք ընտրվում են վարդապետաց դասից կամ վանականներից եւ անշուշտ ամուսնացյալ չեն: Քահանաները լինում են աշխարհիկ եւ կուսակրոն. վերջիններս վարդապետներն են. այս կոչումը նշանակում է ուսուցիչ, քարոզիչ եւ [մատնանշում այն կրողի] գիտական աստիճանը: Քարոզխոսությունը հիմնականում այս դասի ներկայացուցիչների առաքելությունն է: Աշխարհիկ քահանային ընտրում է ժողովուրդը, [մարդիկ], որ եպիսկոպոսին վճարում են ծխականի ձեռնադրության վարձքը: Նա պետք է լինի Սուրբ Գրքին քաջատեղյակ եւ հավատքով ուղղադավան: Սահմանված տարիքը քսանհինգն է. միայն հատուկ տնօրինությամբ կարելի է քահանա ձեռնադրել ավելի վաղ հասակում: Մասնավոր պահանջ է, որ թեկնածուն պետք է մինչ ձեռնադրվելն ամուսնացած լինի: Եւս մի կարեւոր հանգամանք. նա պետք է ունենա [գոնե] մեկ երեխա: Կնոջ մահվան դեպքում քահանան պետք է անմիջապես հեռանա վանք. այդ ժամանակ նա արդեն կարող է եպիսկոպոսական, պատրիարքական կամ նույնիսկ կաթողիկոսական պատվի կոչվել: Ծխական քահանայի պարտականություններն են. մասնակցություն եկեղեցական ծեսերին, հավատացյալների խոստովանություն, մկրտություն, պսակադրություն ու հուղարկավորություն եւ այլն: Նրանց հատուկ գործառույթը պատարագելն է: Ըստ կանոնի՝ քահանան պետք է իր ընտանիքից առանձնանա եւ պատարագին նախորդող տասնհինգ օրերին գիշերի եկեղեցում: Այնուհետեւ նա պետք է տասնհինգ օր պատարագի եւ դարձյալ տասնհինգ օր մնա՝ մինչ ընտանիքի գիրկը վերադառնալը: Առաջին եւ վերջին փուլերում նա պատարագի նշխար է պատրաստում, մկրտում է, վերջին հաղորդություն է տալիս եւ նման գործեր անում: Երբ քահանաները սակավաթիվ են, կանոնն ամենայն խստությամբ անկարելի է պահել, սակայն նույնիսկ այդ դեպքում նրանք պարտավոր են իրենց

տանն՝ առանձին սենյակում գիշերել։ Յուրաքանչյուր քահանա ձեռնադրությունից անմիջապես հետո քառասուն օր անց է կացնում պահեցողությամբ՝ փակված եկեղեցում կամ հարակից որեւէ խցում։ [Այդ օրերին] նրանք կարող են ճաշակել օրական միայն մեկ անգամ։ Կցանկանայի, որ մի օր, մի տեղ մեկն ու մեկը կամք դրսեւորեր՝ թեկուզ քառասուն ժամով մեր գյուղական քահանաներին պահեցողության համար եկեղեցում փակելու, եւ այդ դեպքում մենք այլեւս ստիպված չէինք լինի բողոքել սրբազան կառույցների խարխուլ ու անառողջ վիճակից։

Քահանաների եկամուտը հիմնականում գոյանում է խաչհամբույրից։ Երբեմն [եկեղեցում] գանձանակ է դրված լինում, որի հասույթն ուղղվում է նրանց աջակցությանը։ Որոշ վայրերում նրանք իրենց համայնքի անդամներից հացահատիկով ստանում են տասանորդ կամ «առաջին պտուղ»։

Ամերիկացի միսիոներները, սակայն, անտարբերությամբ են խոսում ծխական հոգեւորականների եւ նրանց կարողությունների մասին։ Բայց նույնիսկ այն, ինչ նրանք գրում են քահանաների դեմ՝ իբրեւ հաշվետվություն, եւ այն, ինչ ասում են իբրեւ անձնական դիտարկում, ահա այս ամենն առավել հակված եմ դրական պնդում համարել։ Քարոզիչներն օրվա մի մասն անցկացրին հայկական գյուղում։ Նրանք գրում են. «Ընտանեկան միջավայրում՝ մեր հյուրընկալի, նրա կնոջ, երեխաների ու մի քանի հարեւանների հետ թոնրի շուրջը նստած հետաքրքիր երեկո անցկացրինք։ Նա գյուղի քահանաներից մեկի որդին էր՝ խոհեմ եւ ուշիմ մարդ։ Եւ նա առավել տեղեկացված էր, քան կարող էինք սպասել նման մի բնակավայրի պարագային։ Իր իսկ նախաձեռնությամբ մեր զրույցը լուրջ բնույթ ստացավ, եւ խոսակցության նյութը փաստարկելու կամ լուսաբանելու համար նա [պահոցից] բերեց եւ հաճախակի հղումներ էր անում ընտանեկան Աստվածաշնչից։ Ուշ ժամի հանգամանքից անտեղյակ՝ զրույցը շարունակեցինք երկար, սակայն սթափվելով՝ ներում հայցեցինք իր հանգիստը խանգարելու համար։ Բայց նա մեզ հավաստիացրեց, որ ո՛չ ինքը եւ ո՛չ իր ընտանիքը նեղություն չեն կրել։ [Նա նաեւ նշեց], որ հայրը հաճախ այցելում է իրենց, եւ գիշերն անց են կացնում հոգեւոր ընթերցանությամբ եւ զրույցներով»։ Վստահաբար այս հոր եւ որդու [պատմությունը] կարող է դիտարկվել որպես հայ հոգեւորականի վարքի եւ էության առավել արդար օրինակ, քան զվարճացող գինեմոլներինը՝ քսան շիշ [դատարկող] մարդկանց (մարմնական կարողություններից վեր եւ անհնարին [մի բան], բացառությամբ այն դեպքերի, երբ շիշը լցնողն [«ազ-

նիվ»] գինեպանն է), որոնց հատուկ անդրադառնում են քարոզիչները։ Մանավանդ, որ այդ պարոններն ստիպված են ամոթահար դեմքով ընդունել. երբ նրանք մտան կենտրոնական Հայաստան, տեսան, որ իրենց նախորդել է ամերիկացի մի գործակալ, որին հաշվարկ սիրող մի քրիստոնյայի շնորհիվ արտաքսել էին իրենց հայրենիքից։ [Մի մարդ], որը ոչ այլ ոք էր, եթե ոչ Նոր Անգլիայի ռոմի [պաշարների] գլխավոր կործանիչը։

Հոգեւորականներից անցնենք նրանց կատարած ծեսերին։ Լույս աշխարհ գալուց ութ օր անց հայ քրիստոնյան նորից է ծնվում հոգեւոր առումով։ Մկրտությունը կատարվում է նորածնի գլխին ջուր հեղելով՝ անվամբ Հոր, եւս մեկ անգամ՝ անվամբ Որդու եւ երրորդ անգամ՝ Սուրբ Հոգու անունով։ Այնուհետեւ նորընծայի մարմինը երեք անգամ ամբողջովին ընկղմում են ավազանի մեջ, խորհրդանշելով Հիսուսի երեքօրյա թաղումը։ Սակայն ո՛չ ջրի մեջ ընկղմելը եւ ո՛չ այն երեք անգամ կրկնելը պարտադիր չեն, որովհետեւ լոկ միայն ջուր հեղելու [եղանակով] կատարված մկրտությունը համարվում է վավերական[18]։ Դրոշմը միշտ կատարվում է մկրտության հետ միաժամանակ։ Ծեսի ընթացքում սուրբ յուղով օծում են [նորադարձի] ճակատն ու հինգ զգայարանները՝ աչք, ականջ, քիթ, բերան, ձեռքերն ու ոտքերը[19]։ Վերջին օծում երբեք չի կատարվում մահվան շեմին։ Կենաց արշալույսին եւ ոչ մայրամուտին սուրբ յուղով օծելու պատճառն այն է, որ ճնշված եւ [աշխարհով մեկ] սփռված ազգ լինելով՝ հայերը հաճախ վախճանվում են այնպիսի վայրերում, ուր հոգեւորականի այցելության հնարավորություն չկա, ուստի համարում են, որ առավել ապահով կլինի, որ ամեն ոք այս կարեւոր [խորհրդին] արժանանա կյանքի սկզբում։ Մկրտության պահից ի վեր նորընծան կարող է սուրբ հաղորդություն ստանալ։

Շարունակությունը՝ հաջորդիվ

Թարգմանությունը՝
Արշակ Բ. Մադոյան
Արշակ Գ. Մադոյան

---

[18] *Հայերը կարծում են, որ մահվան մահճում գտնվող հեթանոսի կամ մահմեդականի մկրտվելու ցանկությունը նույնքան օրինական է, որքան կանոնով սահմանված մյուս դեպքերում.*– ծան. թրգմ.։

[19] *Ճակատ, սիրտ, թիկունք՝ դրոշմի խորհուրդ, աչք, ականջ, քիթ, բերան, ձեռք եւ ոտք՝ վերջին օծում.*– ծան. թրգմ.։